



«Այբ» կրթական հիմնադրամ  
Երևան 0009, Կոռյուն 19ա  
Հեռ.՝ +374 10 54 37 07, +374 98 54 37 07  
info@ayb.am  
www.foundation.ayb.am



հովանու ներքո (ՀՀ)



հովանու ներքո (ԼՂՀ)



միջազգային կազմակերպիչ

Երևան, 19 հունվարի, 2017 թ.

Հարգելի տնօրեն,

«Այբ» կրթական հիմնադրամը ուրախ է հայտարարելու, որ «Կենգուրու 2017» միջազգային մաթեմատիկական մրցույթին մասնակցել ցանկացող դպրոցների գրանցումը սկսված է:

Այս տարի «Կենգուրու» մրցույթը կանցկացվի մարտի 16-ին:

Մրցույթին մասնակցելու համար երեխաների վճարման, անդորրագիրը դպրոց ներկայացնելու և դպրոցի ցուցակներում գրանցվելու վերջնաժամկետն է **փետրվարի 17-ը**, իսկ դպրոցի հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ **փետրվարի 22-ը**:

«Կենգուրուին» մասնակցելու ընթացակարգի վերաբերյալ տեղեկություններ բերված են նամակին կից փաթեթում, որի պարունակությունը նկարագրված է նամակի դարձերեսին, և մրցույթի կայքում, որի հասցեն է՝ [www.kangaroo.am](http://www.kangaroo.am): Բոլոր հարցերով կարող եք դիմել նաև ձեր մարզային համակարգողներին, որոնք հեռախոսահամարները գրված են նամակի դարձերեսին և մրցույթի կայքում:

Տեղեկացնում ենք, որ այս տարվանից Հայաստանի մասնակից աշակերտները կարող են մասնակցության վճարը կատարել նաև «**Թեյ-Սեյ**» տերմինալների միջոցով:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Յուրաքանչյուր մասնակից դպրոց ունի իր անփոփոխ ծածկագիրը: **Ձեր դպրոցի ծածկագիրը նշված է այս նամակի ծրարի վրա:**

Սիրով հրավիրում ենք ձեր դպրոցին մասնակցելու «Մաթեմատիկական բոլորի համար» խորագրի ներքո անցկացվող այս հետաքրքիր մրցույթին

Մեկ անգամ ևս շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի և Արցախի այն դպրոցներին, որոնք մասնակցել են «Կենգուրու 2016»-ին, և ակնկալում ենք, որ անցյալ տարի մրցույթին չմասնակցած դպրոցներն այս տարի կմիանան «Կենգուրու» կոչվող մանկական շարժմանը:

Հարգանքով՝

Սոնա Կոչեցյան  
Գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

## Ինչ է ներառում «Կենզուրուի» փաթեթը

1. «Կենզուրու 2016»-ի հակիրճ նկարագրող ամփոփում  
Միրով ներկայացնում ենք անցյալ տարվա մրցույթի հիմնական արդյունքներն ու ձեռքբերումները:
2. Ուղեցույց դպրոցների համար  
Այստեղ, հեշտության համար, քայլ առ քայլ ներկայացված են դպրոցի պատասխանատուի անելիքները՝ ըստ ժամանակացույցի:
3. Դպրոցի հայտի ձև  
Խնդրում ենք լրացնել մասնակցության հայտը և մինչև փետրվարի 22-ը ներկայացնել «Այբ» հիմնադրամի գրասենյակ կամ ուղարկել փոստով՝ ձեր դպրոցի մասնակից աշակերտների ցանկի և վճարման անդորրագրերի հետ միասին: *Մրցույթին կմասնակցեն միայն նշված ժամկետում հայտ ներկայացրած դպրոցները:*
4. A3 չափի պաստառ  
Խնդրում ենք պաստառը փակցնել դպրոցում՝ որպես «Կենզուրու 2017»-ի հայտարարություն և մրցույթին գրանցվելու ուղեցույց երեխաների համար:
5. Մասնակցության վճարը կատարելու համար անհրաժեշտ բանկային վավերապայմաններ  
Այս թերթիկներում բերված է Հայաստանում («ՎՏԲ-Հայաստան» բանկում կամ «ԹԵԼ-ՍԵԼ» տերմինալների միջոցով) և Արցախում («Արցախբանկ» ՓԲԸ-ում) մասնակցության վճարը կատարելու կարգը: Թերթիկները նախատեսված են երեխաներին և/կամ նրանց ծնողներին տրամադրելու համար: Խնդրում ենք բազմացնել դրանք անհրաժեշտ քանակով, կտրատել և բաժանել երեխաներին:
6. Օրացույց  
2017 թվականի համար նախատեսված օրացույց:

«Կենզուրու 2017»-ի անցկացման մանրամասն կարգը, ինչպես նաև մրցույթին մասնակցելու վերաբերյալ բոլոր կյուբերը հասանելի են [www.kangaroo.am](http://www.kangaroo.am) կայքում:

### Ի՞նչ է «Կենզուրուն»

«Կենզուրուն» մեծ ժողովրդականություն վայելող մաթեմատիկական մրցույթ է և ներկայացնում է տրամաբանական ու հետաքրքրաշարժ խնդիրներ: Ամեն տարի մրցույթին մասնակցում են միլիոնավոր երեխաներ աշխարհի մոտ 70 երկրից: Մրցույթն անցկացվում է անմիջականորեն դպրոցներում՝ ներգրավելով 3-12-րդ դասարանցի բոլոր ցանկացող երեխաներին: Բոլոր մասնակից դպրոցներին և աշակերտներին տրվում են մասնակցության հավաստագրեր, բոլոր երեխաները ստանում են նաև հուշանվերներ, իսկ լավագույնները՝ պատվոգրեր ու մրցանակներ: Հաղթողներին սպասում են արժեքավոր նվերներ, ընդհուպ մինչև տարբեր երկրներում կազմակերպվող միջազգային ամառային ճամբարի ուղեգիր:

«Կենզուրու» մրցույթը չի անցկացվում դպրոցների միջև, այլ նպատակ ունի համընդհանուր հետաքրքրություն առաջացնելու մաթեմատիկայի հանդեպ՝ այն առավել գրավիչ ու սիրելի դարձնելով երեխաների համար: Մրցույթի ավարտից հետո յուրաքանչյուր դպրոց կստանա իր աշակերտների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

«Կենզուրու» մրցույթն անցկացվում է Հայաստանում ՀՀ կրթության և գիտության, Արցախում՝ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունների հովանու ներքո:

Հայաստանում և Արցախում մրցույթի բացառիկ կազմակերպիչն է «Այբ» կրթական հիմնադրամը:

### Մարզային համակարգողներ

1. Արագածոտն  
098 38-08-63, Շուշաննա Ավայան
2. Արարատ  
093 38-08-64, Աննա Մխիթարյան
3. Արմավիր  
093 38-08-63, Անահիտ Ավայան
4. Գեղարքունիք  
093 38-08-64, Աննա Մխիթարյան
5. Երևան  
098 38-08-63, Շուշաննա Ավայան
6. Լոռի  
093 38-08-63, Անահիտ Ավայան
7. Կոտայք  
093 38-08-64, Աննա Մխիթարյան
8. Շիրակ  
093 38-08-63, Անահիտ Ավայան
9. Սյունիք  
093 01-08-61, Մարինե Սարյան
10. Վայոց ձոր  
093 01-08-61, Մարինե Սարյան
11. Տավուշ  
098 38-08-63, Շուշաննա Ավայան
12. Արցախ  
097 33-79-55, Միքայել Համբարձումյան